տեղ, ինչպէս միեւնոյնը Վանում եւս նկատեցի, հարուստները սովորութիւն ունէին իրանց հարստութիւնը ծածկել աղքատութեան կեղեւի տակ: Աւելի թշոառ գտայ ես երեխաներին. ոչ մէկի ոտներին ոտնամաններ չտեսայ, թէեւ ոտնամանների աւելի պէտք ունէին այդ ապառաժոտ, քարեղէն քաղաքում:

Ահա անցաւ մի ամբողջ ասպախումբ: Ամերիկացի կանայք, ձիաների վրայ կողմնակի նստած, քարշ էին տալիս գետնից իրանց երկար զգեստները: Նրանց տղամարդերի գլխարկների վրայ քամուց ծածանւում էին շղարշեայ սպիտակ փաթոթի բաց թողած ծայրերը: Ասպախումբը անցաւ, որպէս մի սրընթաց մրրիկ: Մի քանի ձիաւորներ, տեղային հագուստով, առջեւից արշաւելով, ետ էին մղում բազարի խառնոած բազմութիւնը, որ առանց ստիպմունքի եւս երկիւղածութեամբ ետ էր քաշւում եւ ճանապարհ էր բաց անում: Սկզբում ես կարծեցի, թէ այդ ասպախումբը եւրոպական մի որեւէ պետութեան հիւպատոս պէտք է լինի իր ընտանիքով եւ իր բազմաթիւ համհարզներով, որպէս սովորութիւն ունեն նրանք արեւելքում իրանց, որքան կարելի է, շքեղ եւ մեծափառ ցոյց տալ:

— Ովքե՞ր են դրանք, — հարցրի մի հայից, որ խորին կերպով գլուխ տոեց նրանց անցնելու միջոցին եւ, դեռ անշարժ կանգնած, հիացմունքով նայում էր նրանց ետեւից:

— Մեր «սահաբներն» են, — պատասխանեց նա մի առանձին պարծենկոտութեամբ:

Ես իսկոյն հասկացայ, թէ ովքեր էին: Պարսկաստանում եւս «սահաբ» անունով էին կոչում միսիոնարներին, որ նշանակում է տէր, պարոն: Ահա՛, ոտնաշրջիկ առաքեալների յաջորդները, որոնք բացի մի ցուպից եւ մի մախաղից աւելի ոչինչ չէին կրում իրանց հետ:

— Որտեղի՞ց են գալիս, — հարցրի իմ խօսակցից, որ դեռ շարունակում էր նայել նրանց ետեւից:

— Ամառանոցից, — ասաց նա, դառնալով դէպի ինձ: — Էգուց կիրակի է, քարոզ պէտք է տան:

— Յետոյ դարձեալ կը գնա՞ն ամառանոց:

— Ի հարկէ: Այդ տօթերում քաղաքի մէջ «սահաբները» չեն կարող:

— Իսկ դուք կարո՞ղ էք մնալ:

— Մենք սովորել ենք: Նրանք խօ մեզ նման չեն: Դուք կը գա՞ք քարոզ լսելու, — խօսքը փոխեց նա, — ասում են՝ լաւ քարոզ կը լինի: Շ... «սահաբը» պէտք է խօսի գոյափոխութեան վրայ եւ պէտք է ապացուցանէ, որ հեթանոս